#eapyouth

EaP | Eastern Partnership

ԵՄ-Ն ԱՋԱԿՑՈՒՄ Է ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆԸ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ՓԱԹԵԹ՝ ՄԻՆՉԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԸ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Երիտասարդական հեռանկարների բարելավումը Արևելյան գործընկերության շրջանակներում համագործակցության սրտում է: Եվրոպական Միությունն իր վեց գործընկեր երկրների հետ միասին նպատակ ունի նոր հնարավորություններ ստեղծել երիտասարդների ուսման, աշխատանքի, հասարակությունում ամբողջական մասնակցության և սեփական ներուժի իրացման համար:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է 340 ՄԼՆ ԵՎՐՈՅԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

«Էրազմուս+». 120 միլիոն եվրո՝ 2017 – 2020թթ. համար, որը շուրջ 80,000 երիտասարդի, երիտասարդության ոլորտում աշխատողի, ուսանողի և դասախոսի թույլ կտա օգտվել փոխանակման հնարավորություններից:

«Իթվինինգ Պլյուս». ուսուցիչների փոխանակման և մասնագիտական զարգացման գործում ներգրավված առնվազն 1000 դպրոց՝ Ադրբեջանից, Վրաստանից, Մոլդովայից և Ուկրաինայից:

ԱԼԳ եվրոպական դպրոց. 2018թ. սեպտեմբերից Թբիլիսիում կգործի գերազանցության փարոս՝ ԱԼԳ տարածաշրջանի աշակերտների համար, ովքեր կստանան միջազգայնորեն ճանաչված աստիճան:

Մասնագիտական կրթություն և ուսուցում (ՄԿՈՒ). 2017-2020թթ. համար շուրջ 80 միլիոն եվրոյի աջակցություն ԵՄ-ի կողմից՝ հմտությունների բարելավման, ՄԿՈՒ ոլորտում մասնավոր հատվածի ներգրավման և որակավորումների արդիականացման նպատակով:

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

EU4Youth. 20 միլիոն եվրո՝ ձեռնարկատիրական ներուժի խթանման և աշխատաշուկայի հմտությունների զարգացման նպատակով, այդ թվում՝ բիզնես ինկուբատորների, նորարարական կլաստերների և մենթորային սխեմաների ստեղծման միջոցով, որոնք կողմնորոշված են դեպի ձեռնարկատիրությունը և ոչ ֆորմալ կրթական ծրագրերը՝ դպրոցը վաղաժամկետ լքած անձանց համար:

Եվրոպական կրթական հիմնադրամ. երիտասարդների՝ աշխատանքի անցումն ապահովող քաղաքականությունների քարտեզագրում՝ գործունեության առաջնային ուղղությունների սահմանման և ազգային երիտասարդական ռազմավարություններին աջակցելու նպատակով:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Արևելյան գործընկերության երիտասարդական ֆորում. երկխոսության խորացման և համագործակցության ուղղվածությամբ երկու տարին մեկ անցկացվող միջոցառում: 2017թ. ֆորումից հետո ֆինանսավորում է հատկացվել երիտասարդների ներգրավման ճանապարհային քարտեզների ստեղծման համար:

Քաղաքացիական հասարակության կրթաթոշակների ծրագիր. EU4Youth ծրագիրն աջակցում է Արևելյան գործընկերության երկրների քաղաքացիական հասարակության առաջնորդներին՝ առաջնորդության և հմտությունների զարգացման հարցում:

Երիտասարդ եվրոպական դեսպաններ. 200 «Երիտասարդ եվրոպական դեսպաններ» խթանում են ԵՄ-ի և Արևելյան գործընկեր երկրների երիտասարդների ու երիտասարդական կազմակերպությունների միջև համագործակցությունը՝ ԵՄ արևելյան հարևանության ծրագրի շրջանակներում:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ՝ ՏԱՐԲԵՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

EU4Business, **EU4Innovation** և **EU4Digital** նախաձեռնություններն աջակցում են երիտասարդներին ձեռնարկատիրության, նորարարության և թվային ոլորտներում: Շուտով. աջակցություն երիտասարդ ստեղծարար տաղանդներին՝ մշակութային ոլորտում:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՁԱՅՆԸ՝ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԾԱՏՐՅԱՆ
Երիտասարդ եվրոպական դեսպան՝ Հայաստանից

«Երիտասարդ եվրոպական դեսպան լինելը նշանակում է օժտված լինել որոշակի արժեքներով և այդ արժեքները տարածել քո հայրենիքում՝ Հայաստանում»:

ԱԴՐԲԵՋԱՆ

ՍԱՌԱ ՌԱՋԱԲԼԻՆ
«Էրազմուս+»-ի «Եվրոպական երիտասարդ սոցիալական ձեռնարկատերերի ցանց» դասընթացի մասնակից է:

«Այսպիսի նախագծերի և մարդկանց շնորհիվ ես հասկացա, որ հարցերին ու խնդիրներին ճիշտ մոտեցման, ինչպես նաև գաղափարների, համառության ու աշխատասիրության հանդեպ նվիրվածության պարագայում ոչինչ անհնար չէ»:

ԲԵԼԱՌՈՒՍ

ԼՅՈՒԴՄԻԼԱ ԲԱՏՈՒՐԱ
ԱԼԳ քաղաքացիական հասարակության 2017թ. կրթաթոշակառու

«Այս կրթաթոշակային ծրագրին մասնակցությունն ինձ համար կառավարչական և առաջնորդական հմտություններս զարգացնելու, վեց երկրից նոր մարդկանց հանդիպելու, փորձի փոխանակման և նոր գործընկերությունների հաստատման գերազանց հնարավորություն է»:

ՎՐԱՍՏԱՆ

ԲԵԿԱ ԲԵՐԻԱՇՎԻԼԻՆ
Ռումինիայում ուսանել է մարկետինգային վերլուծություն և ռազմավարություն՝ «Էրազմուս»-ի կրթաթոշակի շրջանակում:

«Մենք մի ասացվածք ունենք. «Մեկ անգամ՝ «Էրազմուս»-ում, հավերժ՝ «Էրազմուս»-ում»: Հենց որ դու անցնում ես դրա միջով, այլևս այլ մարդ ես դառնում»:

ՄՈԼԴՈՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՅՈՒԼԻԱՆԱ ԳՈԼՈՒԲԸ
«Էրազմուս»-ի երիտասարդական դասընթացը շարունակել է Հայաստանում և մասնակցել է երիտասարդ առաջնորդների ֆորումին՝ Կիևում:

«ԵՄ-ի առաջարկած կրթական ծրագրերն ու հնարավորությունները անչափ կարևոր դերակատարություն են ունեցել իմ կրթության և անձի ձևավորման գործում»:

ՈՒԿՐԱԻՆԱ



ԱՆՆԱՆ
Օդեսայում գործող իր դպրոցի հետ մասնակցել է «Իթվինինգ Պլյուս»-ի մրցանակակիր ծրագրի:

«Այժմ ես ինձ զգում եմ եվրոպական համայնքի մի մաս. ես իմացա, որ ներկայացնում եմ իմ մշակույթը»:

ԻՄԱՑԵՔ ԱՎԵԼԻՆ

ԵՄ-Ի ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ
www.euneighbours.eu/en/east/eu-in-action/youth

«ԷՐԱԶՄՈՒՍ+»
www.ec.europa.eu/programmes/erasmus-plus

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
www.etf.europa.eu

«ԻԹՎԻՆԻՆԳ ՊԼՅՈՒՍ»
http://plus.etwinning.net

EaP | Eastern Partnership